



DIGNITY

# «ԴԻԳՆԻԹԻ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ














«ԴԻԳՆԻԹԻ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի (ԴԻԳՆԻԹԻ)
ԺԱՄԱՆԱԿԱՆԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ:

Փաստաթուղթը մշակվել է «ԴԻԳՆԻԹԻ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

© «ԴԻԳՆԻԹԻ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Փաստաթուղթը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «ԴԻԳՆԻԹԻ» Մարդասիրական ՀԿ-ին:

Բոլոր իրավունքները պահպանված են:

©DIGNITYngo2026

© This document was prepared, designed and published by DIGNITY Humanitarian NGO
© Սույն փաստաթուղթը պատրաստվել, ձևավորվել և իրապարակվել է «ԴԻԳՆԻԹԻ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

# ՆԿԱՐԱԳԻՐ.

Ժամանակավոր կացարանը/շելթերը իրենից ներկայացնում է ապահով տարածք, որը կարճաժամկետ հիմունքներով տրամադրվում է անձանց, ովքեր հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում և այն հանդիսանում է որպես ժամանակավոր աջակցություն:

## Կացարանում/շելթրում պարտադիր առկա են՝

- Սենյակներ
- Խոհանոց
- Սանհանգույց
- Հանգստի սենյակ:

## Ժամանակավոր կացարանի/շելթրի տրամադրման չափորոշիչներ.

*Ժամանակավոր կացարանը/շելթրը տրամադրվում է այն մարդկնաց ովքեր ենթարկվել են՝*

- Խարանի/խտրականության
- Բռնության
- Խոցելի խմբերի այն ներկայացուցիչներին, ովքեր բժշկական ծառայություններից օգտվելու նպատակով մարզերից ժամանել են Երևան:

*Ժամանակավոր կացարը/շելթերը տրամադրվում է շահառուի դիմումին համաձայն:*

Կացարանի/շելթրի տրամադրման ժամկետները.

Ժամանակավոր կացարանը/շելթերը տրամադրվում է՝ ելնելով.

- Դեպքից և/կամ իրավիճակից,
- Ուսումնասիրելով շահառուի դիմումը, քննարկելով այն վերջինիս հետ,

**Ժամանակավոր կացարանը տրամադրվում է 15 օր ժամկետով: Բացառիկ դեպքերում անձի դիմումի հիման վրա այն կարող է երկարաձգվել, սակայն ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել 1 ամիսը:**

*Ժամկետները կարող են վերանայվել, շահառուի գրավոր դիմիումի հիման վրա, եթե՝*

- *Շահառուի կյանքի նկատմամբ առկա է սպառնալիք,*
- *Շահառուն, ելնելով իր առողջական վիճակից, չի կարող աշխատել և/կամ  չի կարող հոգալ իր կարիքները,*
- *Ելնելով պանդեմիկ իրավիճակից՝ շահառուների կյանքի որակի հետ տեղի է ունեցել ֆորս-մաժորային իրավիճակ,*
- *Այլ ֆորս-մաժորային իրավիճակներ:*

Կացարանի տրամադրումը կարող է դադարեցվել, եթե՝

- *Շահառուն չի պահպանել ժամանակավոր կացարանի/շելթերի կանոնները /հավելված 1/,*
- *Գրավոր դիմել է երկկողմ պայմանագրի դադարեցման համար,*
- *Առնվազն մեկ օր չի վերադարձել կացարան առանց տեղեկատվության:*

**Դիմումների ստացման և կարգավորման ընթացակարգ**

- Գրավոր դիմումի ներկայացում,
- Դիմումի մուտք ԴԻԳՆԻԹԻԻ էլեկտրոնային համակարգ,
- Դիմումի քննման ժամկետները ըստ հրատապության՝
- *Խարանի/խտրականության և բռնության դեպքեր՝ 1 աշխատանքային օր*
- *Բժշկական ծառայություններից օգտվելու դեպքեր՝ մինչև 3 աշխատանքային օր*
- *Ժամանակավոր կացարան՝ մինչև 5 աշխատանքային օր:*

**Դիմումատուի հետ կապի հաստատում և քեյսավորում.**

***Հարցազրույցի անցկացում՝***

- Դիմողի հետ իրականացվում է հարցազրույց՝ պարզելու անձի վերաբերյալ որոշակի տվյալներ, առկա խնդիրները և համապատասխանությունը ԴԻԳՆԻԹԻԻ ժամանակավոր կացարանի/շելթրի տրամադրման չափանիշներին: Միաժամանակ ներկայացվում են նաև կացարանում/շելթրում գործող կանոնները:
- Դիմողին հարզացրույցի ընթացքում տրամադրվում է նաև իրավաբանական խորհրդատվություն և ներկայացվում է ՀՀ գործող իրավական ակտերը և կառույցները:

### Կարիքի գնահատում

Անձի հետ իրականացվում է կարիքի գնահատում: Ըստ արձանագրված կարիքների՝ ցուցաբերվում է համապատասխան աջակցությունը:

### Արդյունքների ամփոփում

Հարցացրույցի արդյունքները համապատասխան եզրակացությամբ ներկայացվում են ԴԻԳՆԻԹԻԻ նախագահին: ԴԻԳՆԻԹԻԻ չափանիշներին համապատասխանելու պարագայում բավարարվում է անձի դիմումը:

### Կացարանի տրամադրում և իրավական ակտի ստորագրման ընթացակարգ.

- Դիմողից անձը հաստատող փաստաթղթերի հավաքագրում,
- Դիմումատուի հետ իրավական ակտի ստորագրում,
- Դիմումատուին ուղեկցում ժամանակավոր կացարան/շելթեր:

### Ընթացիկ կարիքի գնահատում:

Պարբերաբար իրականացվում է անձի կարիքների գնահատում, անհրաժեշտության դեպքում շարունակական աջակցություն տրամադրելու նպատակով, ըստ ԴԻԳՆԻԹԻԻ առկա ծառայությունների և հնարավորությունների / հավելված 2/:

Միաժամանակ շարունակականորեն գնահատվում է անձի վարքագիծը, ինչպես նաև նրա կողմից կացարանի կանոններին հետևելը:

Ուղղորդումներ:

- Տրամադրվում է տեղեկատվություն պետական և գործընկեր կառույցների կողմից տրամադրվող աջակցությունների վերաբերյալ:
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է ուղղորդում տարբեր մարմիններ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

## Ժամանակավոր կացարանի/շելթերի կանոնակարգ

- Չծխել տարածքում
- Արգելվում է տեսանկարահանում կամ լուսանկարահանում կացարանի տարածքում
- Չօգտագործել ալկոհոլ պարունակող խմիչքներ
- Չօգտագործել և կացարան չբերել թմրանյութեր պարունակող նյութեր
- Մաքուր և սարքին պահել սենյակը և կացարանի տարածքը
- Հատկացված գույքը, իրերը օգտագործել նպատակային նշանակությանը համապատասխան
- Չընդունել հյուրեր սենյակում
- Չաղմկել
- Հարգանք դրսևորել հյուրերի նկատմամբ
- Հավաքել Ձեր թողած աղբը
- Պահպանել անվտանգության բոլոր կանոնները
- կացարանում բնակվելու ընթացքում տարածք վերադառնալ մինչև ժամը 22:00-ն,
- Ժամը 23:00-ից հետո տարածքում արգելվում է շարժը՝ անջատվում են լույսերը, հեռուստացույցը և այլն:

## Սենյակում

- Չծխել
- Չօգտագործել ալկոհոլ պարունակող խմիչքներ
- Չօգտագործել և կացարան չբերել թմրանյութեր պարունակող նյութեր
- Չաղտոտել տարածքը
- Չընդունել հյուրեր սենյակում
- Չաղմկել
- Հարգանք դրսևորել հյուրերի նկատմամբ
- Հավաքել Ձեր թողած աղբը
- Պահպանել անվտանգության բոլոր կանոնները

## Խոհանոց

- Լվանալ Ձեր կողմից օգտագործված սպասքը
- Հավաքել Ձեր թողած աղբը
- Պահապանել անվտանգության և հիգիենայի բոլոր կանոնները:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ԴԻԳՆԻԹԻԻ ծառայությունների նկարագիր

## Մարդու իրավունքների պաշտպանություն

- Իրավաբանական և փաստաբանական աջակցություն
- Դատական ներկայացուցչություն

## Առողջության պահպանման և ծառայությունների հասանելիության ապահովում

- ՄԻԱՎ-ի հետազոտություն և ՀՌՎ բուժման ուղղորդում
- ՍՃՓՎ հետազոտություն և բուժում
- Հեպատիտ B, C հետազոտություն
- Պահպանակների, լուբրիկանտների, ալկոգելերի և դիմակների տրամադրում
- PrEP-ի և PEP-ի տրամադրում

## Կարողությունների զարգացում և հզորացում

- Սեմինար-վարժանքների, հանդիպում-քննարկումների կազմակերպում
- Փորձի փոխանակման ծրագրեր
- Ենթադրամաշնորհների տրամադրում
- Տեխնիկական աջակցություն

## Մարդասիրական աջակցություն

- Սոցիալական և ֆինանսական աջակցություն
- Հոգեբանական խորհրդատվություն
- Ժամանակավոր ապաստարանի տրամադրում

## Շահերի պաշտպանություն

- Մշտադիտարկում և զեկույցների ու առաջարկների պատրաստում
- Տեղական և միջազգային կազմակերպություններում ներկայացուցչություն:

# ՄԵՐ ՄԱՍԻՆ

«ԴԻԳՆԻԹԻ» Մարդասիրական ՀԿ-ն (ԴԻԳՆԻԹԻ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:
ՀԿ-ն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

ՀԿ-ի գործունեությունն ուղղված է մարդու իրավունքների պաշտպանությանը, առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովմանը, հասարակության խոցելի խմբերի, կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի, պետական հաստատությունների հզորացմանը, սոցիալական աջակցության տրամադրմանը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների կատարման աջակցմանը:

**Արժեքները**

- Հավասարություն
- Արդարություն
- Հանդուրժողականություն
- Արժանապատվություն
- Բազմազանություն
- Խաղաղասիրություն
- Խտրականության բացառում
- Իրավունքի գերակայություն
- Խոսքի ազատություն
- Մարդասիրություն

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

- Մարդու իրավունքների պաշտպանություն
- Առողջության պահպանման և ծառայությունների հասանելիության ապահովում
- Կարողությունների զարգացում և հզորացում
- Մարդասիրական աջակցություն
- Շահերի պաշտպանություն

Drop-in
Centers Armenia

Մ
Ե
Ր

# DropIn կենտրոնները

**DropIn** կենտրոնները ընկերական միջավայրեր են, որի ծառայություններից կարող են օգտվել այն մարդիկ, որոնք հարգում են բազմազանությունը ու չեն խտրականացնում մյուսներին:

FRIENDLY YEREVAN DROPIn CENTER — +374 44 478980

FRIENDLY GYUMRI DROPIn CENTER — +374 312 38989

FRIENDLY VANADZOR DROPIn CENTER — +374 322 24989

Drop-In Centers Armenia

Drop-in
Centers Armenia

© This document was prepared, designed and published by Dignity Humanitarian NGO
© Սույն փաստաթուղթը պատրաստվել, ձևավորվել և հրապարակվել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

+37460378989 / +37460478989
www.dignity.ngo